

–Այո՛, բոլոր թաղերէն աւելի. թաղեցին հաւասարապէս կսիրէ ազգն եւ եկեղեցին. բայց ասկէ հետեւցնելու չէ, թէ նուազ կսիրէ օղին, գոր կխմէ երեկոյեան ժամը մինչեւ մէկ ու կէսին: Գինետան մէջ մէկուկէսէն աւելի նստողներն կբամբասուին, իսկ մինչեւ մէկ ու կէս նստելով ճաթելու չափ օղի խմողներն մեծ համակրութիւն կը վայելեն՝ իբրեւ օրինաւոր մարդեր: Եկեղեցւոյն գորգերն այնչափ շատ կհամբուրուին, որ ամիսն անգամ մը կը պատառուին. թաղականը այս կէտը նկատողութեան առնելով տեսաւ, որ այդ համբոյրներուն գորգ չպիտի դիմանայ, ուստի որոշեց գորգերը վերցնել: Ժողովուրդը հիմայ հողի վրայ կը կայնի եւ հողը կը համբուրէ. թող որ եկեղեցւոյ հողն ալ հինգած է այդ համբոյրներէն:

Սամաթիացին ցած ձայնով խօսիլ չգիտեր. թէպէտեւ երբեմն գաղտնիք մը հաղորդելու համար ականջոյ ի վայր կխօսի, բայց դարձեալ այդ խօսքը Ենի Գաբուէն կլսուի:

Ինչպէս վերը յիշեցինք՝ քծնիլ չսիրեր, շողոքորթութենէ կփախչի, բայց երբ ազգային կռիւ մը ելնէ՝ հոգւով մարմնով կնետուի. իսկ եթէ ազգային վեճ մը չըլլայ՝ կաշխատի վեճ մը հանելու: Առանց վեճի կարելի չէ իրեն ապրիլ:

Սամաթիացիներուն մէկ մասն ոսկերիչ է, եւ այս հերիք է հասկցնելու համար, թէ կերակուրի մասին ո՛րքան բծախնդիր է: Ամենէն լաւ միսն, ձուկն, կարագն, պանիրն, ապուխտն եւ պտուղն սամաթիացիին կ'երթան: Մեծ կարեւորութիւն կը տրուի հոս փորին, գոր գոհացնելու համար բան մը չխնայուիր: Հոս փորը պճնասէր է:

Սամաթիացին թաղին մէջ հայերէն, իսկ շուկան տաճկերէն կը խօսի:

Դառնանք գեղեցիկ սեռին, որ իրօք գեղեցիկ է, պարզասէր եւ աշխատասէր: Սամաթիոյ տիկիները դաստիարակութեան պէտքը զգացած են եւ կ'աշխատին, որ իրենց աղջիկներն ալ ուսում եւ կրթութիւն առնեն, մինչդեռ ուրիշ թաղի մը տիկիներն կփափագին, որ իրենց աղջիկներն բրինձի փոշի եւ կարմիր ներկ առնեն: Թաղիս տիկիներն շատ մը թաղերու այրերէն աւելի ազգասէր են: Առաջին անգամ Սահմանադրութեան տարեդարձը պատուող կինը սամաթիացի էր:

Եթէ Պօլսոյ միւս թաղերն Սամաթիոյ հետեւող ըլլան՝ Պօլսոյ ժողովուրդն քիչ ատենի մէջ զգալի փոփոխութիւն կկրէ, բայց օղին գինն ալ շատ կբարձրանայ:

Թաղիս օղն շատ աղէկ չէ. ուստի զայն բարեխառնելու համար է, որ թաղեցին օղին շատ կխմէ: